«ՆԱԻՐԻ ԻՆՇՈՒՐԱՆՍ»
ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Հաստատված է
«ՆԱԻՐԻ ԻՆՇՈՒՐԱՆՍ» Ապահովագրական ՍՊԸ-ի
խորհրդի 16.05.2008թ. որոշմամբ (արձանագրություն թիվ 006)

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԲԱԺԻՆ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ 3
ԲԱԺԻՆ 2. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏ 3
ԲԱԺԻՆ 3. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐՆԵՐ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՌԻՍԿԵՐ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՅՈՒՄԸ ԲԱՑԱՌՈՂ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ 4
ԲԱԺԻՆ 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՈՒՄԸ, ԴՐԱ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ, ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՐԿՆՕՐԻՆԱԿԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ 5
ԲԱԺԻՆ 5. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԼՈՒԾՈՒՄԸ, ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՆՎԱՎԵՐՈՒԹՅՈՒՆԸ.....6
ԲԱԺԻՆ 6. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՄԱՐ 7
ԲԱԺԻՆ 7. ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐ, ԴՐԱ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐ ՉՎՃԱՐԵԼՈՒ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ 7
ԲԱԺԻՆ 8. ՉՀԱՏՈՒՑՎՈՂ ԳՈՒՄԱՐ 7
ԲԱԺԻՆ 9. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....8
ԲԱԺԻՆ 10. ԱՊԱՀՈՎԱԴՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....9
ԲԱԺԻՆ11. ՎՆԱՍԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ 10
ԲԱԺԻՆ 12. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ.....12

ԲԱԺԻՆ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 Մասնագիտական պատասխանատվության ապահովագրության կանոնները (այսուհետև՝ Կանոններ) մշակված են «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին, ՀՀ քաղաքացիական օրենսգրքին և այլ իրավական ակտերին համապատասխան:

1.2 «Նաիրի Ինշուրանս» Ապահովագրական Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետև՝ Ապահովագրող) կողմից իրականացվող Մասնագիտական պատասխանատվության ապահովագրությունը ներառվում է «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված ոչ կյանքի ապահովագրության տեսակի «Ընդհանուր պատասխանատվության ապահովագրություն» դասի մեջ:

1.3 Օրենքի, այլ իրավական ակտերի և Կանոնների հիման վրա Ապահովագրողը կնքում է Մասնագիտական պատասխանատվության ապահովագրության պայմանագիր և (կամ) ապահովագրության վկայագիր (այսուհետև՝ ապահովագրության վկայագիր և ապահովագրության պայմանագիր հասկացությունների փոխարեն Կանոններում կօգտագործվի «Պայմանագիր» հասկացությունը) իրավաբանական կամ գործունակ ֆիզիկական անձանց հետ (այսուհետ՝ Ապահովադիր):

1.4 Պայմանագրով Ապահովագրողը պարտավորվում է Պայմանագրում սահմանված վճարի (այսուհետև՝ ապահովագրավճար) դիմաց Պայմանագրով նախատեսված դեպքի (այսուհետև՝ ապահովագրական պատահարի) ի հայտ գալու պարագայում փոխհատուցել Ապահովադրին կամ այլ անձին, ում օգտին կնքվել է Պայմանագիրը (այսուհետև՝ Շահառու) ապահովագրական պատահարի հետևանքով պատճառված վնասը (ապահովագրական հատուցում) Պայմանագրում սահմանված գումարի (ապահովագրական գումար) շրջանակներում:

1.5 Կանոնները կցվում են Պայմանագրին հանդիսանելով դրա անբաժանելի մասը և պարտադիր են Ապահովագրողի և Ապահովադրի համար (այսուհետև՝ նաև Պայմանագրի կողմեր):

1.6 Պայմանագրի Կողմերը փոխադարձ համաձայնությամբ կարող են Պայմանագրով նախատեսել Կանոնների առանձին դրույթների փոփոխում, չկիրառում կամ այլ դրույթներ, որոնք չեն հակասում օրենքին և այլ իրավական ակտերին:

ԲԱԺԻՆ 2. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏ

2.1. Կանոնների համաձայն ապահովագրության օբյեկտ են հանդիսանում օրենքին կամ այլ իրավական ակտերին չհակասող Ապահովադրի գույքային շահերը, որոնք կապված են նրա մասնագիտական գործունեության իրականացման ընթացքում կամ դրա արդյունքում երրորդ անձին պատճառված նյութական վնասի հատուցման հետ, պայմանով, որ մասնագիտական գործունեությունն իրականացվել է ունենալով համապատասխան գիտելիքներ, փորձ և հմտություն:

2.2. Ապահովագրողը Պայմանագրով (վկայագրով) նշված առավելագույն պատասխանատվության չափի (ապահովագրական գումարի) սահմաններում հատուցում է Ապահովադրին՝ երրորդ անձանց կողմից նրան դատական կարգով ներկայացված բոլոր այն խելամիտ ծախսերը, որոնք պատճառվել են

երրորդ անձին Ապահովադրի մասնագիտական գործունեության իրականացման արդյունքում, ինչպես նաև վճարում է դատական գործընթացի հետ կապված ծախսերը, պայմանով, որ դա նախօրոք համաձայնեցվել է Ապահովագրողի հետ:

ԲԱԺԻՆ 3. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐՆԵՐ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՌԻՍԿԵՐ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՈՒՄԸ ԲԱՑԱՌՈՂ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ

3.1. Ապահովագրական պատահարը Պայմանագրով նախատեսված պատահական դեպք է, որի տեղի ունենալու դեպքում ծագում է Ապահովադրին (Շահառուին) ապահովագրական հատուցում վճարելու Ապահովագրողի պարտավորությունը:

3.2. Կանոնների համաձայն ապահովագրական պատահար են համարվում այն իրադարձությունները (բացառությամբ Կանոնների 3.3 կետում նշված դեպքերի), որոնք հետևանք են Պայմանգրում սահմանված Ապահովադրի մասնագիտական գործունեության իրականացման ընթացքում թույլ տրված սխալների, անփութության կամ բացթողումների, որոնց պատճառով երրորդ անձի (անձանց) կողմից պահանջ է ներկայացվել պատճառված վնասի հատուցման համար, պայմանով, որ `

ա) վնասը պատճառվել է Պայմանագրի գործողության ընթացքում,

բ) գոյություն ունի պատճառահետևանքային անմիջական կապ հատուցման ենթակա վնասի և պատահարի միջև,

գ) տվյալ պատահարի հետևանքով պատճառված վնասի հատուցման վերաբերյալ հայտը ներկայացվել է Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքին, օրենքին և այլ իրավական ակտերին համապատասխան:

3.3. Ապահովագրողը չի հատուցում ուղղակի կամ անուղղակի վնասը, եթե դրանք հետևանք են՝

ա) փաստի, իրադրության, իրադարձության կամ պատահարի, որը մինչև Պայմանագրի կնքումը հայտնի են եղել Ապահովադրին կամ Ապահովադիրը պետք է ակնկալեր, որ դրանք կարող են բերել իր նկատմամբ հայցի ներկայացման.

բ) պատահարի առաջացմանն ուղված Ապահովադրի կանխամտածված, դիտավորյալ կամ հանցավոր գործողության կամ անգործության, օրենքի, իրավական ակտի նորմի կամ նորմատիվային փաստաթղթի կոպիտ խախտման.

գ) այնպիսի ֆիզիկական կամ իրավաբանական անձի կողմից, որի նկատմամբ Ապահովադիրն ի պաշտոնե իրականացնում է ղեկավարում (կառավարում), Ապահովադրին պատճառված վնասի հատուցման վերաբերյալ հայցի ներկայացման.

դ) վերահսկողության, որն ի պաշտոնե իրականացվում է Ապահովադրին վերահսկողի կամ ղեկավարողի կամ այն անձի կողմից, որի փայատեր է հանդիսանում Ապահովադիրը կամ որի հետ առկա է փոխկապակցվածություն (բարեկամական կամ ընտանեկան կապ).

ե) Պայմանագրի կնքման ժամանակ Ապահովադրի կողմից ապահովագրության օբյեկտի վերաբերյալ կանխամտածված ձևով կեղծ և ապահովագրական ռիսկի գնահատման համար էական տեղեկատվության ներկայացման.

զ) պատահարի առաջացման վերաբերյալ Պայմանագրով և (կամ) Կանոններով սահմանված կարգով և ժամկետում Ապահովադրի (Շահառուի) կողմից Ապահովագրողին չտեղեկացման կամ ապահովագրական հատուցման վերաբերյալ որոշման կայացման համար անհրաժեշտ տեղեկատվության կամ փաստաթղթի չտրամադրման կամ պատահարի առաջացման պայմանների, բնույթի կամ վնասի չափի որոշման աշխատանքներում Ապահովագրողի կամ նրա ներկայացուցչի գործողություններին խոչնդոտման.

է) Ապահովադրի գործունեության իրականացման թույլտվության կամ լիցենզիայի գործողության ժամկետի լրանալուց կամ դադարեցումից հետո կամ կասեցված լինելու ընթացքում մասնագիտական գործունեություն իրականացնելիս թույլ տված սխալների կամ բաց թողումների:

ը) օրենքի, այլ իրավական ակտերի կամ Պայմանագրի համաձայն ապահովագրական հատուցումը բացառող հանգամանքների:

ԲԱԺԻՆ 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՈՒՄԸ, ԴՐԱ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ, ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՐԿՆՕՐԻՆԱԿԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ

4.1. Պայմանագիրը կնքվում է Ապահովադրի կողմից Ապահովագրողի սահմանված ձևի գրավոր դիմում-հարցաթերթիկի հիման վրա (բացառությամբ Կանոնների 4.2 կետում նշված դեպքի), որում պետք է պարունակվեն ապահովագրության օբյեկտի վերաբերյալ պահանջվող տեղեկությունները:

4.2. Պայմանագիրն անհրաժեշտության դեպքում կարող է կնքվել Ապահովադրի բանավոր դիմումի հիման վրա, պայմանով, որ Պայմանագրում ընդգրկվեն ապահովագրության օբյեկտի վերաբերյալ Ապահովագրողի կողմից պահանջվող տեղեկությունները:

4.3. Պայմանագիր կնքելիս Ապահովադիրը պետք է Ապահովագրողին հայտնի իրեն հայտնի բոլոր այն հանգամանքների մասին, որոնք էական նշանակություն ունեն ռիսկի գնահատման համար:

4.4. Պայմանագրի կնքման (ապահովագրության իրականացման) փաստը հավաստվում է Ապահովագրողի կնիքով և գործադիր տնօրենի կամ համապատասխան լիազորված անձի ստորագրությամբ Ապահովադրին կամ նրա լիազորված ներկայացուցչին Պայմանագիր հանձնելու պահից:

4.5. Պայմանագրի գործողության ժամկետը նշվում է Պայմանագրում: Սակայն եթե Պայամանագրում գործողության ժամկետ նշված չէ, ապա Կանոնների համաձայն Պայմանագիրն ուժի մեջ է մտնում՝

ա) ապահովագրավճարը կանխիկ վճարելու դեպքում՝ Ապահովագրողի կողմից ապահովագրավճարի կամ դրա մի մասի ստացմանը օրը.

բ) ապահովագրավճարը անկանխիկ կերպով վճարելու դեպքում Ապահովագրողի հաշվին փոխանցված վճարը մուտք լինելու հաջորդ օրվանից:

4.6. Պայմանագրով ապահովագրության ժամկետը սովորաբար սահմանվում է մինչև մեկ տարի տևողությամբ: Ապահովադիրը և Ապահովագրողը կարող են համաձայնության գալ Պայմանագրում ապահովագրության մեկ տարուց ավելի երկար ժամկետ սահմանելու համար:

4.7. Ապահովագրողը պատասխանատվություն է կրում այն ապահովագրական պատահարի համար, որը տեղի է ունեցել Պայմանագրի գործողության ընթացքում:

4.8. Պայմանագրի կորստի դեպքում Ապահովագրողը երկու աշխատանքային օրվա ընթացքում Ապահովադրին է տրամադրում Պայմանագրի կրկնօրինակը, իսկ Պայմանագրի կորած օրինակը համարվում է անվավեր և դրանով ապահովագրական հատուցում չի կատարվում:

ԲԱԺԻՆ 5. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԼՈՒԾՈՒՄԸ, ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՆՎԱՎԵՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1. Պայմանագիրը վաղաժամկետ լուծվում է՝

ա) ապահովադրի, եթե նա իրավաբանական անձ է՝ լուծարման, իսկ եթե ֆիզիկական անձ է՝ մահվան դեպքում.

բ) Պայմանագրից Ապահովադրի (Շահառուի) վաղաժամկետ հրաժարվելու դեպքում.

գ) Պայմանագրով նախատեսված բոլոր պարտավորություններն Ապահովագրողի կողմից կատարելու դեպքում.

դ) օրենքով, այլ իրավական ակտերով, Կանոններով կամ Պայմանագրով նախատեսված այլ դեպքերում:

5.2. Ապահովագրողի պահանջով Պայմանագրի վաղաժամկետ լուծման դեպքում Ապահովադրին են վերադարձվում ապահովագրավճարներն ամբողջությամբ, բացառությամբ Կանոնների 5.3 կետով նախատեսված դեպքի:

5.3. Պայմանագիրը կարող է Ապահովագրողի պահանջով վաղաժամկետ լուծվել՝ Ապահովադրի կողմից օրենքով, այլ իրավական ակտերով, Կանոններով կամ Պայմանագրով նախատեսված իր պարտականությունները չկատարելու դեպքում, որի ժամանակ Ապահովադրին է վերադարձնում ապահովագրավճարը՝ Պայմանագրի չլրացած ժամկետին համամասնորեն, իսկ ապահովագրավճարի հաշվարկման համար որպես հիմք ընդունվում է Պայմանագրի համաձայն Ապահովադրի կողմից վճարված ապահովագրավճարի 50 տոկոսը, եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

5.4. Ապահովադիրն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու Պայմանագիրն՝ այդ մասին ոչ պակաս քան 15 օր առաջ ծանուցելով Ապահովագրողին:

5.5. Ապահովադրի (Շահառուի) կողմից Պայմանագրից վաղաժամկետ հրաժարվելու դեպքում՝ վերջինիս վերադարձվում են Պայմանագրի չլրացած ժամկետի համար մուծված ապահովագրավճարը՝ մասնահանելով վերջինիս ապահովագրավճարի 30 տոկոսի չափով գործավարման ծախսեր, եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

5.6. Այն դեպքում, երբ Ապահովադրի պահանջները պայմանավորված են Ապահովագրողի կողմից Պայմանագրի պայմանների խախտմամբ, ապա վերջինս Ապահովադրին է վերադարձնում վճարված ապահովագրավճարներն ամբողջությամբ, եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

5.7. Ապահովագրողի լուծարման դեպքում, վերջինս պարտավոր է Ապահովադրին վերադարձնել Պայմանագրի չլրացած ժամկետի համար մուծված ապահովագրավճարը:

5.8. Պայմանագիրն առոչինչ կամ անվավեր է համարվում օրենքով, այլ իրավական ակտերով, Կանոններով կամ Պայմանագրով նախատեսված դեպքերում և կարգով:

ԲԱԺԻՆ 6. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՄԱՐ

6.1. Ապահովագրական գումարն Ապահովադրի և Ապահովագրողի համաձայնությամբ որոշված դրամական արտահայտությամբ գումար է, որի սահմաններում Ապահովագրողը պատասխանատվություն է կրում Պայմանագրով և Կանոններով սահմանված իր պարտավորությունների կատարման համար:

6.2. Ապահովագրական պատահար տեղի ունենալու դեպքում ապահովագրական հատուցումը վճարվում է Պայմանագրով սահմանված ապահովագրական գումարի սահմաններում:

6.3. Եթե Պայմանագրի գործողության ընթացքում Ապահովագրողը կատարել է ապահովագրական հատուցում, ապա ապահովագրական գումարը նվազեցվում է կատարված հատուցման չափով: Ապահովադիրը կարող է դիմել Ապահովագրողին ապահովագրական գումարի նախկին չափը վերականգնելու պահանջով, որն իրականացվում է լրացուցիչ համաձայնագիր կնքելու միջոցով:

ԲԱԺԻՆ 7. ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐ, ԴՐԱ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐ ՉՎՃԱՐԵԼՈՒ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

7.1. Ապահովագրավճարն ապահովագրության համար նախատեսված գումար է, որն Ապահովադիրը Պայմանագրի համաձայն պարտավոր է մուծել Ապահովագրողին:

7.2. Ապահովագրավճարը հաշվարկվում է ելնելով ապահովագրական սակագնից (ապահովագրական գումարի նկատմամբ ապահովագրավճարի դրույքաչափ), որը սահմանվում է ելնելով ապահովագրական օբյեկտի (ապահովագրական ռիսկի) բնութագրերից և այլ գործոններից, որոնք կարող են ազդել ապահովագրական պատահարի առաջացման և վնասի չափի մեծության վրա:

7.3. Պայմանագրով սահմանված կարգով՝ Ապահովադիրն ապահովագրավճարը կարող է մուծել միանվագ կամ մաս-մաս:

7.4. Ապահովադրի կողմից ապահովագրավճարի վճարումն Ապահովագրողին կարող է իրականացվել ինչպես կանխիկ տեսքով, այնպես էլ անկանխիկ հաշվարկներով:

7.5. Ապահովագրավճարի վճարման կարգը սահմանվում է Պայմանագրով:

7.6. Եթե Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 14-օրյա ժամկետում Ապահովադիրը չի վճարում միանվագ կամ առաջին հերթական ապահովագրավճարը, ապա Ապահովագրողն իրավունք ունի միակողմանի լուծելու Պայմանագիրը, եթե Պայմանագրով նախատեսված չէ այլ ժամկետ կամ ապահովագրավճարի մուծման տարաժամկետման հնարավորություն:

7.7. Եթե Ապահովադիրը Պայմանագրով սահմանված կարգով և ժամկետում չի վճարել հերթական ապահովագրավճարը, ապա Ապահովագրողն իրավունք ունի ապահովագրավճարի վճարման համար սահմանված ժամկետից երեք օր (լրացուցիչ ժամկետ) հետո միակողմանի լուծելու Պայմանագիրը՝ առանց այդ մասին ապահովադրին ծանուցելու:

ԲԱԺԻՆ 8. ՉՀԱՏՈՒՑՎՈՂ ԳՈՒՄԱՐ

8.1. Պայմանագրում կարող է սահմանվել չհատուցվող գումար (ապահովադրի մասնակցության չափ վնասի հատուցմանը), որն Ապահովագրողի և Ապահովադրի միջև համաձայնեցված գումար է կամ սահմանվում է ապահովագրական գումարի նկատմամբ տոկոսային հարաբերությամբ:

8.2. Չհատուցվող գումարը կարող է լինել պայմանական կամ ոչ պայմանական:

8.3. Պայմանագրում Պայմանական չհատուցվող գումար սահմանված լինելու դեպքում Ապահովագրողը ազատվում է ապահովագրական հատուցման պատասխանատվությունից, երբ ապահովագրական հատուցման գումարը չի գերազանցում Պայմանագրով սահմանված չհատուցվող գումարի չափը, և պարտավոր է վճարել ապահովագրական հատուցումն ամբողջությամբ, երբ ապահովագրական հատուցման գումարը գերազանցում է չհատուցվող գումարի չափը:

8.4. Պայմանագրում ոչ պայմանական չհատուցվող գումար սահմանված լինելու դեպքում Ապահովագրողը չհատուցվող գումարի չափով ազատվում է ապահովագրական հատուցում իրականացնելուց:

ԲԱԺԻՆ 9. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

9.1. Ապահովագրողը պարտավոր է՝

ա) Ապահովադրին ծանոթացնել Կանոններին և Պայմանագրի պայմաններին.

բ) Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում ապահովագրական հատուցում վճարել Ապահովադրին.

գ) Ապահովագրական գումարի և պատճառված վնասի մեծության սահմաններում հատուցել Ապահովադրի այն ծախսերը, որոնք ողջամտության սահմաններում կատարվել են ապահովագրական պատահարի ընթացքում վնասների կանխման կամ նվազեցման նպատակով կամ Ապահովագրողի ցուցումներին համապատասխան.

դ) Չհրապարակել կամ այլ կերպ չտարածել Ապահովադրի անձնական շահերի, գույքային դրության և առևտրային կամ բանկային գաղտնիք պարունակող տեղեկությունները.

ե) կատարել օրենքով, այլ իրավական ակտերով, Կանոններով և Պայմանագրով իրեն վերապահված այլ պարտականություններ:

9.2. Ապահովագրողն իրավունք ունի՝

ա) ստուգել Ապահովադրի կողմից ներկայացված տվյալների իսկությունը և Ապահովադրի կողմից ռիսկի աստիճանի գնահատման կամ վնասի չափի որոշման վրա ազդող կանխամտածված սխալ տեղեկություններ ներկայացնելու փաստը ապացուցելու դեպքում վաղաժամկետ դադարեցնել Պայմանագրի գործողությունը,

բ) ինքնուրույն պարզել, իսկ անհրաժեշտության դեպքում հրավիրել անկախ մասնագետի (փորձագետի)՝ ռիսկի աստիճանը կամ պատճառված վնասի հանգամանքները և (կամ) չափը որոշելու համար,

գ) Ապահովադրի հետ իր հարաբերություններն իրականացնել ապահովագրական բրոքերի կամ ապահովագրական գործակալի միջոցով.

դ) հարցումով դիմել համապատասխան լիազոր (իրավասու) մարմիններ ապահովագրական պատահարի տեղի ունենալու փաստը և պատճառները հաստատող փաստաթղթեր կամ այլ տեղեկությունները ստանալու նպատակով.

ե) ավելացնել ապահովագրավճարի չափը կամ դադարեցնել Պայմանագիրը, եթե Պայմանագրի գործողության ընթացքում տեղի է ունեցել ապահովագրական ռիսկի մեծացում,

զ) օրենքի, այլ իրավական ակտերի, Կանոնների և Պայմանագրի համաձայն մերժել ապահովագրական հատուցման վճարումը,

է) իրականացնել օրենքով, այլ իրավական ակտերով, Կանոններով և Պայմանագրով իրեն վերապահված կամ չարգելված այլ գործառնություններ:

ԲԱԺԻՆ 10. ԱՊԱՀՈՎԱԴՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

10.1. Ապահովադիրը պարտավոր է՝

ա) Պայմանագրում նշված կարգով և ժամկետում մուծել ապահովագրավճարը.

բ) Պայմանագրի կնքման ժամանակ և դրանից հետո Ապահովագրողին հայտնել ապահովագրական ռիսկի գնահատման համար էական նշանակություն ունեցող՝ իրեն հայտնի բոլոր տեղեկությունները.

գ) Ապահովագրողին հայտնել ապահովագրական օբյեկտի գծով առկա այլ ապահովագրության պայմանագրերի մասին.

դ) երրորդ անձանց կողմից վնասի հատուցման վերաբերյալ պահանջի ներկայացման (պատահարի առաջացման) դեպքում այդ մասին (այդ թվում՝ գրավոր) ոչ ուշ քան 48 ժամվա ընթացքում տեղյակ պահել Ապահովագրողին: Եթե Ապահովադիրն Ապահովագրողին չի հայտնել պատահարի մասին սույն ենթակետում նշված կարգով և ժամկետում, ապա Ապահովագրողը Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 1017 հոդվածի 2-րդ մասի համաձայն իրավունք ունի չվճարելու ապահովագրական հատուցումը, եթե չապացուցվի, որ Ապահովագրողը ժամանակին իմացել է ապահովագրական պատահարի վրա հասնելու մասին կամ, որ այդ մասին Ապահովագրողի մոտ տեղեկությունների բացակայությունը չէր կարող ազդել ապահովագրական հատուցում վճարելու նրա պարտականության վրա.

ե) պատահարի առաջացման դեպքում անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել վնասի կանխման կամ նվազեցման ուղղությամբ.

զ) Ապահովագրողին ներկայացնել պատահարի վերաբերյալ իրեն հայտնի բոլոր տեղեկությունները և փաստաթղթերը, որոնք հնարավորություն կտան պարզել պատահարի պատճառներն ու վնասի չափը.

է) առանց Ապահովագրողի համաձայնության երրորդ անձին չվճարել կամ չտալ վնասի հատուցման վերաբերյալ ոչ մի ուղղակի կամ անուղղակի պարտավորության իրականացման երաշխիքներ.

ը) պատճառված վնասի չափի որոշման ժամանակ ապահովել Ապահովագրողի կամ նրա ներկայացուցչի պարտադիր մասնակցությունը.

թ) կատարել օրենքով, այլ իրավական ակտերով, Կանոններով և Պայմանագրով իրեն վերապահված այլ պարտականություններ:

10.2. Ապահովադիրն իրավունք ունի `

ա) Ապահովագրողից պահանջել, որպեսզի վերջինս ներկայացնի իր պետական գրանցումը և գործունեության թույլտվությունը հավաստող փաստաթղթերը (պետական գրանցման վկայական, լիցենզիա).

բ) ծանոթանալ Կանոններին.

գ) Ապահովագրողի հետ իր հարաբերություններն իրականացնել ապահովագրական բրոքերների կամ ապահովագրական գործակալի միջոցով.

դ) օրենքի, այլ իրավական ակտերի, Կանոնների և Պայմանագրի համաձայն ստանալ ապահովագրական հատուցում.

ե) Պայմանագիրը կորցնելու դեպքում ստանալ դրա կրկնօրինակը.

զ) իրականացնել օրենքով, այլ իրավական ակտերով, Կանոններով և Պայմանագրով իրեն վերապահված կամ չարգելված այլ գործառնություններ:

ԲԱԺԻՆ11. ՎՆԱՍԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

11.1. Ապահովագրական հատուցումն իրականցվում է Ապահովագրողի կողմից օրենքին, այլ իրավական ակտերին, Կանոններին և Պայմանագրին համապատասխան՝ հիմք ընդունելով Ապահովադրի (Շահառուի) հայտարարությունը՝ դիմումը, ինչպես նաև վնասի պատճառը և (կամ) չափը հավաստող՝ համապատասխան լիազորված մարմնի (մարմինների) կողմից հաստատված փաստաթուղթը (փաստաթղթերը):

11.2. Ապահովադիրն ապահովագրական հատուցում ստանալու նպատակով պետք է լրացնի և Ապահովագրողին ուղարկի սահմանված ձևի գրավոր դիմում (դիմում հայտարարագիր): Եթե Ապահովադիրը չունի այդ դիմումի ձևը, ապա նա կարող է այն ստանալ Ապահովագրողից կամ նրա ներկայացուցչից:

11.3. Ապահովագրական հատուցում ստանալու համար Ապահովադիրը (Շահառուն) Ապահովագրողին է ներկայացնում նաև Պայմանագրի իր օրինակը:

11.4. Ապահովագրողը կամ նրա կողմից լիազորված անձը կարող են կազմել վթարային հավաստագիր: Այդ նպատակով նրանք իրավունք ունեն ապահովագրական պատահարի հետ կապված լրացուցիչ տվյալներ հավաքագրել իրավապահ մարմիններից, պետական կառավարման մարմիններից

կամ այլ անձանցից, որոնք տիրապետում են պատահարի առաջացման հանգամանքների մասին տեղեկատվության:

11.5. Ապահովագրողը պատահարի առաջացումից հետո իրավունք ունի դիմելու անկախ փորձագետների՝ ապահովագրական պատահարի պատճառները բացահայտելու և վնասի չափը ճշտելու համար, ինչպես նաև ապահովագրական հատուցման չափը որոշելիս հիմնվելու վերջիններիս եզրակացությունների վրա:

11.6. Անհրաժեշտության դեպքում տեղի ունեցած պատահարի վերաբերյալ տեղեկություն ստանալու նպատակով Ապահովագրողը կարող է դիմել պետական մարմինների, կազմակերպությունների կամ այլ անձանց, ովքեր տիրապետում են ապահովագրական պատահարի վերաբերյալ տեղեկատվությանը:

11.7. Ապահովագրողն իրավունք ունի անձամբ հետաքննելու և պարզելու ապահովագրական պատահարի հանգամանքները և պատճառները:

11.8. Վնասի չափը որոշում է Ապահովագրողն իր կողմից կազմած ապահովագրական ակտի և համապատասխան լիազորված մարմիններից ստացված փաստաթղթերի, ինչպես նաև ապահովագրական պատահարի վերաբերյալ Ապահովադրի ներկայացրած գրավոր դիմում-հայտարարագրի հիման վրա, որտեղ նշվում են պատահարի տեղի ունենալու ժամկետը և պատճառները:

Վնասի չափը կարող է որոշվել ապահովադրի կամ նրա ներկայացուցչի մասնակցությամբ:

11.9. Մեկ կամ մի քանի ապահովագրական պատահարների հետևանքով տրվող ապահովագրական հատուցման գումարը չի կարող գերազանցել Պայմանագրով նախատեսված ապահովագրական գումարի չափը: Եթե Պայմանագրի գործողության ընթացքում իրականացվել է ապահովագրության հատուցում ապահովագրական գումարից պակաս չափով, ապա Պայմանագիրը շարունակում է իր գործողությունը՝ Պայմանագրով սահմանված ապահովագրական գումարի և վճարված ապահովագրական հատուցման տարբերության չափով:

11.10. Ապահովագրողի կողմից ապահովագրական հատուցման մերժելու հիմք են հանդիսանում՝

ա) Ապահովադրի, նրա ներկայացուցչի կամ Շահառուի կողմից պատահարի առաջացմանն ուղղված կանխամտածված անօրինական գործունեությունը, որը որակվում է դատարանի կամ քննչական մարմինների փաստաթղթերի համաձայն.

բ) Ապահովադրի կողմից ապահովագրության օբյեկտի վերաբերյալ դիտավորյալ ոչ հավաստի տեղեկություններ ներկայացնելը, բացառությամբ այն դեպքերի, որոնք էական նշանակություն չեն ունեցել ապահովագրական ռիսկի գնահատման համար.

գ) օրենքով, այլ իրավական ակտերով, Կանոններով կամ Պայմանագրով նախատեսված այլ դեպքեր:

11.11. Ապահովագրական հատուցման վճարման մերժումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

11.12. Ապահովագրական հատուցման վճարումը կարող է հետաձգվել, եթե Ապահովադրի, նրա ներկայացուցչի կամ Շահառուի նկատմամբ հարուցվել է քրեական գործ՝ կապված պատահարի առաջացման հետ, ինչպես նաև օրենքով, այլ իրավական ակտերով, Կանոններով կամ Պայմանագրով նախատեսված դեպքերում:

11.13. Ապահովագրողն ապահովագրական պատահարի մասին Կանոններում նշված բոլոր անհրաժեշտ փաստաթղթերն ստանալուց հետո 5 օրվա ընթացքում պարտավոր է օրենքի, այլ իրավական ակտերի և Կանոնների համաձայն ընդունել ապահովագրական հատուցումը վճարելու կամ մերժելու մասին եզրակացություն (որոշում):

11.14. Ապահովագրողն ապահովագրական հատուցումը վճարելու մասին որոշումը պատշաճ կերպով՝ Ապահովադրին (Շահառուին) անձամբ հանձնելու միջոցով տրամադրում է Ապահովադրին (Շահառուին) կամ այդ որոշումը փոստային առաքմամբ ուղղարկվում է Ապահովադրին (Շահառուին)՝ նրա գտնվելու վայրով կամ փոստային հասցեով:

11.15. Ապահովագրական հատուցում իրականացնելու մասին որոշում կայացնելու օրվանից 20 օրվա ընթացքում Ապահովագրողը պարտավորվում է միանվագ իրականացնել ապահովագրական հատուցումը, եթե Ապահովագրողը և Ապահովադիրը (Շահառուն) ապահովագրական հատուցման վճարման այլ կարգ կամ ժամկետ չեն համաձայնեցրել:

11.16. Ապահովագրական հատուցումը, որպես կանոն, վճարվում է այն արժույթով, որով ապահովագրավճարը մուծվել է Ապահովագրողին:

11.17. Ապահովագրական հատուցման նվազեցման կամ հատուցման մերժման դեպքում Ապահովագրողի կայացրած պատճառաբանված որոշումը հնգօրյա ժամկետում պատվիրված նամակով առաքվում է Ապահովադրին (Շահառուին)՝ նրա մշտական բնակության հասցեով:

11.18. Ապահովագրական հատուցման մերժման դեպքում, եզրակացության մեջ պետք է նշվեն մերժման պատճառները:

ԲԱԺԻՆ 12. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

12.1. Պայմանագրի գործողության ընթացքում առաջացող բոլոր վեճերը լուծվում են Պայմանագրի Կողմերի միջև անմիջական բանակցությունների միջոցով: Բանակցությունների միջոցով համաձայնություն ձեռք չբերելու դեպքում, վեճերը լուծվում են դատական կարգով՝ օրենքին և այլ իրավական ակտերին համապատասխան:

12.2. Վիճելի հարցերի լուծման ժամանակ Պայմանագրի դրույթները գերակա են Կանոնների դրույթների նկատմամբ:

12.3. Վեճերի առաջացման դեպքում Կանոններով չկարգավորված հարցերը կարգավորվում են օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով: